

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՄԱԿԿ-ՄԱԾՁԲ-23/12**

ք. Երևան

«24» փետրվարի 2023թ.

«Վ» միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Խաչատուր Կիրակոսյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Ամիրջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 66,254,683 (վաթսուներկու միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տուգանք՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության զնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ քողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, քայք ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

#### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ միջուկային անվտանգության  
կարգավորման կոմիտե  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
ՀՀ 900011040020  
ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քաղաքապետ  
Ի. Կիրակոսյան



(ստորագրություն)

Կ.Տ.

##### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Միջուկային և ռադիացիոն  
անվտանգության գիտատեխնիկական  
կենտրոն» ՓԲԸ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
Ինքնաբանկ  
ՀՀ 2052022100061001  
ՀՎՀՀ 02558849

Տնօրեն  
Ա. Էմիրջանյան



(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«« դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության				մատուցման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը/«« դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
1	50531140-1	«« միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կադրերների համար փորձաքննության ծառայության (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N° 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման մանրամասն տեխնիկական բնութագիրը բերված է հավելված 1.1-ում Փորձաքննության ծառայությունների մատուցման համար պահանջվում է լիցենզիա Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծման և այլ փաստաթղթերի փորձաքննության ԼԻՑԵՆԶԻԱ	դրամ	66254683	1	Ք.Երևան Տիգրան Մեծի 4	25.12.2023

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող աճել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

\*\* Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի կողմից առաջարկված պատվեր - առաջադրանքների:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
 «« միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 «« ՖՆ գործառն վարչ.  
 «« 900011040020  
 ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
 Ի. Կիրակոսյան  
  
 (ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 «Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 Իննկորանկ  
 «« 2052022100061001  
 ՀՎՀՀ 02558849  
 Տնօրեն  
 Ա. Ամիրջանյան

  
 (ստորագրություն) Կ.Տ.

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2023 թվականին ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին փորձաքննության ծառայությունների (փորձաքննության անցկացման, ՀԱԷԿ-ի N° 2 էներգաբլոկի շահագործման անվտանգության գնահատման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, կարգավորող փաստաթղթերի մշակման ու կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության) մատուցման

### 1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննություն

- 1.1 Արոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության գնահատում, տեխնիկական որոշումների, կարգավորող փաստաթղթերի նախագծերի, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վրանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի, սեյսմիկ անվտանգության վերագնահատման ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերի և միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի գնահատում և փորձաքննություն:
- Ներկայացված տեխնիկական որոշումների, մոդիֆիկացիաների անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի և ծրագրերի, միջուկային ու ճառագայթային անվտանգությանը վերաբերող այլ փաստաթղթերի ամբողջականության ստուգում:
  - Անվտանգության պահանջների և չափորոշիչների համապատասխանության ստուգում (անհրաժեշտության դեպքում կատարելով ստուգողական հաշվարկներ):
  - Ներկայացված անվտանգության հիմնավորումների և հաշվարկների, նախագծային լուծումների ստուգման համար սեփական մաթեմատիկական մոդելի ձևափոխում և վերլուծությունների կատարում (անհրաժեշտության դեպքում):
  - Փորձագիտական եզրակացության մշակում:
- 1.2 ՀԱԷԿ-ի N° 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու 35-րդ բեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի N° 2 էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն: Ակտիվ գոտու ու միջուկային վառելիքի հեղ աշխատանքների անվտանգության հիմնավորման գնահատում:
- Ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության ստուգում:
  - Ներկայացված հաշվարկների ստուգման համար Կենտրոնի կողմից PARCS-RELAP և PARCS-PATHS ծրագրերով մշակված ՀԱԷԿ-ի N° 2 էներգաբլոկի ակտիվ գոտու մաթեմատիկական մոդելի ձևափոխում:
  - Ստուգողական հաշվարկների և փորձագիտական գնահատականների կատարում:
  - Ներկայացված անվտանգության հիմնավորումների և ծրագրերի վերաբերյալ փորձագիտական գնահատականների կատարում:
  - Եզրակացության մշակում:

### 2. ՀՀ ՄԱԿԿ-ի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ

- 2.1 ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի հերմետիկ սրահների ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության մոդելի (COCOSYS-ի հիման վրա մշակված) կիրառմամբ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի առաջին կոնտուրից ջերմատարի արտահոսքով պայմանավորված վթարի ուսումնասիրություն:
- COCOSYS ծրագրային փաթեթի տեսական մասի ուսումնասիրություն: ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի հերմետիկ սրահների մոդելի ինժեներական ուղեցույցի մշակում:
  - Մոդելում լրացումների կատարում՝ հաշվի առնելով ՀԱԷԿ-ի մոդերնիզացիան:
  - ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի առաջին կոնտուրից 200 մմ տրամագծով ջերմատարի արտահոսքով պայմանավորված վթարի վերլուծություն՝ հաշվի առնելով սպիրիկներային համակարգի արտադրողականության վերաբերյալ ճշգրտված տվյալները:
  - Վերլուծության արդյունքների հիման վրա հաշվետվության մշակում:
- 2.2 Ներքին ազդակների ԱՀՎ-ի արդյունքների հիման վրա ՀԱԷԿ-ում միջադեպերի կարևորության գնահատման ծրագրային միջոցի լրամշակում:
- Ներքին ազդակների ԱՀՎ-ի արդյունքների հիման վրա ՀԱԷԿ-ում միջադեպերի կարևորության գնահատման ծրագրային միջոցի մուտքային տվյալների թարմացում:
  - ՀԱԷԿ-ում տեղի ունեցած միջադեպի վերլուծություն և անվտանգության վրա դրա պոտենցիալ ազդեցության գնահատում:
  - Ցածր մակարդակի և գրեթե տեղի ունեցած միջադեպի վերլուծություն և անվտանգության վրա դրա պոտենցիալ ազդեցության գնահատում:

- Վերլուծության արդյունքների հիման վրա հաշվետվության մշակում:

**2.3 Փոքրացված ակտիվ գոտով (ոնեակտորի իրանը նեյտրոնային ֆյունեսից պաշտպանող կասեյրներով) ՋՋԷՌ-440 ոնեակտորի ակտիվ գոտու բնութագրերի հեղազոտություն:**

- Փոքրացված ակտիվ գոտով ՋՋԷՌ-440 ոնեակտորի շահագործման ֆինանսական փորձի ուսումնասիրություն:
- Ակտիվ գոտու լավարկված բեռնավորումների ուսումնասիրություն:
- Հաշվետվության մշակում:

**2.4 Ճառագայթային անվտանգության և պաշտպանության բնագավառի կարգավորող փաստաթղթերի լրամշակում դրանք հարմոնիզացնելով ԵՄ դիրեկտիվաների, Նոր օրենքի և ԱԷՄԳ պահանջներին:**

- «Ճառագայթային անվտանգության և պաշտպանության պահանջներ» փաստաթղթի նախագծի լրամշակում՝ հաշվի առնելով կոմիտեի և միջազգային փորձագետների առաջարկները:
- ԵՄ դիրեկտիվաներին ամբողջական հարմոնիզացիայի համար ՀՀ իրավական դաշտի փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունների և նոր փաստաթղթերի մշակման առաջարկների ձևակերպում:

**2.5 Ռադիոակտիվ թափոնների կառավարման բնագավառի կարգավորող փաստաթղթերի մշակում և լրամշակում:**

- «Ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման պահանջներ» նախագծի քննարկում ՀՀ ՄԱԿԿ և միջազգային փորձագետների (GRS, ԱԷՄԳ) հետ, շարունակական լրամշակում՝ հաշվի առնելով ստացված դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև Նոր օրենքի նախագծի փոփոխությունները:
- «Ռադիոակտիվ թափոնների պետական գրանցման կարգը» նախագծի քննարկում ՀՀ ՄԱԿԿ և միջազգային փորձագետների (GRS, ԱԷՄԳ) հետ, շարունակական լրամշակում՝ հաշվի առնելով ստացված դիտողություններն ու առաջարկությունները:
- Ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կառուցման անվտանգության հիմնավորման հաշվետվության ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների մշակում (գերատեսչական ակտ):

**2.6 «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակում:**

- «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» նոր օրենքի նախագծի լրամշակում՝ ըստ ՀՀ ՄԱԿԿ-ի և այլ փորձագետների կողմից տրված դիտողությունների:

**2.7 ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի անվտանգության հավանականային գնահատման (ԱԿԳ) և ոնեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի խմբերի աշխատանքային ծրագրերով սահմանված հեղազոտական խնդիրներ:**

- ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ԱԿԳ աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, մասնակցություն աշխատանքային խմբի գործունեության պլանավորմանը:
- ՋՋԷՌ շահագործող երկրների կարգավորող մարմինների ֆորումի ոնեակտորային ֆիզիկայի ծրագրերի վերիֆիկացիայի աշխատանքային խմբի կողմից դիտարկվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն:

**2.8 «Նոր միջուկային բլոկի նախագծային անվտանգության պահանջներ» փաստաթղթի վերանայում:**

- Փաստաթղթի վերանայում՝ հաշվի առնելով ԱԷՄԳ անվտանգության ստանդարտների փոփոխությունները, ԵՄ SEPA համաձայնագրով նախատեսված դիրեկտիվաների, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի միջուկային կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) «Safety of new NPP designs» փաստաթղթի պահանջները:
- Սեյսմիկ վտանգի գնահատման վերաբերյալ գործող փաստաթղթերի վերանայման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության տրամադրում:

**3. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ**

**3.1 Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ազգային հաշվետվության վերաբերյալ միջազգային փորձագիտական հանրության կողմից տրված հարցերի պատասխանների մշակում:**

- Կոնվենցիայի մասնակից երկրների կողմից տրված հարցերի պատասխանների մշակում՝ Կենտրոնի իրավասությունների շրջանակում:
- Մասնակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից կազմակերպված քննարկումներին:
- Քննարկումների արդյունքում ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից տրված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա Կենտրոնի պատասխանների լրամշակում և ներկայացում ՀՀ ՄԱԿԿ (ըստ անհրաժեշտության):
- Աջակցություն սահիկաշարերի պատրաստման մասով:

**3.2 Տեխնիկական աջակցություն ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից իրականացվող ստուգումներին և փցենզավորման, ներառյալ թույլտվությունների տրամադրման գործունեությանը:**

- Աջակցություն տարեկան պլանի համաձայն ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից իրականացվող ստուգումներին, ներառյալ ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ և դոզիմետրիկ չափումների իրականացում, այդ թվում՝ իրենց նախնական աղբյուրներ օգտագործող օբյեկտներում, հանքավայրերում և ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:
- Կարգավորող հսկողությունից դուրս գտնվող ռադիոակտիվ աղբյուրների կամ ռադիոնուկլիդներով աղտոտված տարածքների և իրերի հայտնաբերման վայրերում ռադիոմետրիկ, սպեկտրոմետրիկ և դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:

- Լիցենզավորված անձի կողմից Կոմիտե ներկայացված ճառագայթային անվտանգության ապահովման վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից մաքսային ստուգման կետերում ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման վերաբերյալ ՀՀ ՄԱԿԿ ներկայացված փաստաթղթերի՝ հաղորդագրությունների, չափման հաշվետվությունների, բժշկական տեղեկանքների և այլ տեղեկությունների, դիտարկում և եզրակացությունների նախագծի պատրաստում:
- Միջուկային և ռադիոակտիվ նյութերի, գեներացնող ճառագայթման աղբյուրների հետ գործունեության լիցենզավորմանն առընչվող փաստաթղթերի վերլուծություն և եզրակացության տրամադրում:
- ՀՀ ՄԱԿԿ-ի անձնակազմի արտաքին ճառագայթահարման դոզաների հսկողություն՝ անհատական դոզիմետրիկ չափումների իրականացում, չափման արդյունքների վերլուծություն և հաշվետվության տրամադրում:
- ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված ճառագայթային անվտանգության վերաբերյալ հաշվետվությունների դիտարկում և դիտարկման հաշվետվության պատրաստում:

**3.3 ՀՀ ՄԱԿԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի, վեբ-կայքի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:**

- ՀՀ ՄԱԿԿ-ի միջուկային տեղեկատվական համակարգի՝ ներառյալ իրենց ճառագայթման աղբյուրների ազգային ռեգիստրի (RASOD), լիցենզիաների և թույլտվությունների ռեգիստրի (AUTHORIZATION), իրենց ճառագայթման աղբյուրներ օգտագործող/օգտագործած օբյեկտների ռեգիստրի (LICENSEES), քննությունների անցկացման էլեկտրոնային համակարգի (TESTING), տեսչական գործունեության գրանցման ռեգիստրի (INSPECTION), տեխնիկական սպասարկում և կատարելագործում (ըստ անհրաժեշտության), համակարգչային ցանցի, ներառյալ վիրտուալ սերվերների, արտաքին հոստինգի, ներքին հեռախոսային ցանցի, տեսախցիկների համակարգի և ֆիզիկական պաշտպանության համակարգի տեխնիկական սպասարկում տարվա ընթացքում:
- xARIS-ի տեղադրում և Կոմիտեի անձնակազմի ուսուցում: Կոմիտեի ներկա բազայի տեղափոխում xARIS: Աջակցություն ծրագրային միջոցի գործարկման և օգտագործման ընթացքում:
- Կոմիտեի նոր կայքի տեխնիկական սպասարկում:

**3.4 Աջակցություն միջուկային տեղակայանքներում և ռադիոակտիվ աղբյուրների օգտագործման հետ կապված պարտազանցների վերաբերյալ հաշվետվությունների (IRS, INES) ներկայացման, ԱԷՄԳ-ի INIS, RASIMS, IRMIS տեղեկատվական համակարգերում մասնակցության, CBRN, INTERPOL կազմակերպությունների գործունեության հետ կապված ՀՀ ՄԱԿԿ-ի սրանձնած պարտականությունների կատարմանը, ինչպես նաև ԱԷՄԳ-ի տարածաշրջանային RER ծրագրերում՝ որպես կոնսուլտանտի անձ (քննադատի) հանդես գալու հետ կապված պարտականությունների կատարում:**

- IRS համակարգին ներկայացնելու համար ՀԱԷԿ-ում տեղի ունեցած պատահարների մասին տեղեկությունների հավաքում և գնահատում:
- IRS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:
- ԱԷՄԳ-ի IRS և INES համակարգերի տվյալների բազայում առկա միջուկային տեղակայանքներում տեղի ունեցած պատահարների տեղեկատվության վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն և ՀԱԷԿ-ի անվտանգության տեսակետից կարևոր պատահարների վերաբերյալ ՀՀ ՄԱԿԿ-ին տեղեկատվության տրամադրում:
- INIS համակարգին ներկայացնելու համար ՀՀ գիտական ամսագրերում տպագրված և INIS-ի թեմատիկային վերաբերվող հոդվածների մասին տեղեկությունների հավաքում:
- INIS ձևաչափով հաշվետվությունների պատրաստում և ԱԷՄԳ-ին տրամադրում:
- RASIMS և IRMIS համակարգեր մուտքագրելու համար տվյալների պատրաստում և մուտքագրում:
- ԱԷՄԳ տարածաշրջանային RER ծրագրերի վարում:

**4. Նոր մասնագետների պատրաստում ՀՀ ՄԱԿԿ-ի և Կենտրոնի համար**

**4.1 ՀՀ ՄԱԿԿ-ի և Կենտրոնի համար նոր մասնագետների պարրաստման աշխատանքներ (3 պարրաստվող մասնագետ):**

- Մասնագետների պատրաստման ծրագրերի մշակում/վերամշակում:
- Մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում/վերամշակում:
- Նոր պատրաստվող մասնագետների համար դասընթացների փուլերի կազմակերպում և անցկացում:
- Նոր պատրաստվող մասնագետների գիտելիքների պարբերական ստուգում:

**5. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգ**

**5.1 Վաղ ահազանգման ռադիացիոն մոնիթորինգի համակարգի (EWRMS - Early Warning Radiation Monitoring System) սպասարկում:**

- Թվով 32 ստացիոնար ռադիացիոն մոնիթորինգի կայանների և թվով 2 շարժական սպեկտրոմետրիկ կայանների պարբերական սպասարկման աշխատանքների կազմակերպում և իրականացում, համակարգի աշխատունակության և ֆիզիկական ամբողջականության ապահովում:
- Հաշվետվության մշակում:

**5.2 Շինանյութի ճառագայթային մոնիթորինգ:**

- Տարբեր շինանյութերում ռադիոիզոտոպների պարունակության չափումներ (տարբեր գույների տուֆ, մարմար/մարմարի փոշի, բազալտ/բազալտի փոշի, պերլիտ, պեմզա, գրանիտ/գրանիտի փոշի, տարբեր տեսակի ավազներ, ցեմենտ, գաջ, գիպս/գիպսոնիտ և այլ)՝ ընդհանուր 50-60 նմուշ:

- Շինանյութում ռադիոիզոտոպների պարունակության չափման արդյունքների ներկայացման (սերտիֆիկատ կամ պարունակության վերաբերյալ տեղեկանք) ձևաթղթի մշակում:
- Հաշվետվության մշակում:

**6. ՀՀ ՄԱԿԿ-ի ռադիացիոն լաբորատորիայի ստեղծում**

6.1 ՀՀ ՄԱԿԿ-ի ռադիացիոն լաբորատորիայի ստեղծմանն աջակցող աշխատանքներ:

- Ռադիացիոն լաբորատորիայի ստեղծման համար նախատեսված տարածքում ԱԷՄԳ-ի կողմից տրամադրված սարքավորումների տեղադրման համար համապատասխան ենթակառուցվածքի ստեղծում:
- Աջակցություն ԱԷՄԳ-ից ստացվելիք սարքավորումների մաքսազերծման, փոխադրման, տեղադրման և շահագործման հանձնման աշխատանքներին:
- Աջակցություն ռադիացիոն լաբորատորիայի ստեղծմանը վերաբերող ԵՄ պրոյեկտի նախապատրաստական աշխատանքներին:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ միջուկային անվտանգության  
կարգավորման կոմիտե  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
ՀՀ 900011040020  
ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
Խ.Կիրակոսյան

  
\_\_\_\_\_  
(ստորագրություն) Կ.Տ.



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Միջուկային և ռադիացիոն  
անվտանգության գիտատեխնիկական  
կենտրոն» ՓԲԸ  
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
Ինեկոբանկ  
ՀՀ 2052022100061001  
ՀՎՀՀ 02558849

Տնօրեն  
Ա.Ամիրջանյան

  
\_\_\_\_\_  
(ստորագրություն) Կ.Տ.



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Որամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության											Ընդամենը	
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		
1	50531140/1	Փորձաքննության ծառայություն			6625468	23189140	23189140	23189140	39752810	39752810	39752810	66254683	66254683	66254683	66254683

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

«Սիջուկային անվտանգության կարգավորման կոմիտե»  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 ՀՀ ՖՆ գործառն վարչ.  
 ՀՀ 900011040020  
 ՀՎՀՀ 02705793

Գլխավոր քարտուղար  
 Խ.Կիրակոսյան

  
 (ստորագրություն) Կ.Տ.  


**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Սիջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ  
 Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4  
 Ինքնկրթանկ  
 ՀՀ 2052022100061001  
 ՀՎՀՀ 02558849

Տնօրեն  
 Ա.Ամիրջանյան

  
 (ստորագրություն) Կ.Տ.  


Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դրությամբ գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական ընտրության համառոտ չարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված զեման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված զեման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_ ազգանուն, անուն  
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_ ազգանուն, անուն  
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

զնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն